կունք՝ բարձր են հասակաւ և քաջառողջ կազմով, նոյնպէս ընչիւք և ստացուածովք։ Աւելորդ է կարծեմ զուրցելը, որ բաժակ մի չայի հրաւէրը՝ բազմազան քաղցրահաճակ ըմպելեաց փոխուեցաւ, և մեծածախ ընթրեաց սեղանը զարդարեցին Ազախու ծովու ազնիւ ձկունք՝ իրենց համեղահաճակ կիթերով։ Գիշերուան ժամը 12 ին, յայտնելով իմ սրտէ շնորհակալութիւնքս առ հասարակ ամենայն Նախիջևանցւոց, մանաւանդ անարգամեծար տանուտերաց և հիւրընկալ ասպնջականաց, դարձանք 'ի տուն Պոպոյեանցի, ուստի առաւօտեան ժամը 8 ին յուղի անկայ, նոյն ճանապարհաւ որով հասել էի 'ի Նախիջևան՝ վերադառնալ ի Կաֆա։ Մեծապէս գոհ եմ որ չհանդիպեցայ Ազախու ծովուն անհանդարտ ալեաց կատաղութեան. երբ ի Կերչէ շոգենաւը կը յառաջէր դէպ 'ի Թէոդոսիա, և կը պարզէր նաւուն առաջ Սև ծովը իւր կապուտակ ծոցը վէտ առ վէտ գեղեցիկ կոհակներով, յանկարծ միտքս եկան Ազախու պղտոր և դեղնագոյն անհանդարտ ալիքը, որ Եւքսինոսի համեմատելով՝ շատ անախորժ և տգեղ երևցան։ Տակաւ առաջ գնալով, ընդ առաջ մեր կ'ելնէր (ըստ մեր ձեռագրաց բացատրութեանց) ծովադիտակ և հոյակապ մայրաքաղաքն Կաֆա, իւր այժմեան մերկագլուխ սարերով, զորս մեր տնաշէն նախնիք զարդարել են գմբեթաղարդ տաճարներով, և յետոյ տնաւեր խուժանք քարուքանդ արել են և զԾովային Հայաստան (Armenia marittima) աւերակաց և դերբկաց կոյտեր դարձուցել են։ Մինչդեռ Թէոդոսիոյ նաւահանգիստը մտնելով՝ կ'ուզէի զգալ այն մխիթարութիւնը, զոր ամէն ճանապարհորդ կը զգայ՝ յետ ամսօրեայ բացակայութեան 'ի տուն վերադառնա-